հաւանօրէն կազմում էին նախարարների հպատակ գիւղացիները: Զինաշարժի վարժեցնել կամ ձի նստիլ սովորեցնել կարող էր իշխանը իր սեփական գիւղում եւ իր գիւղացիներին:

Տարօրինակ է, որ չի յիշւում երբեք շինական այրուձի: Կարելի՞ է հետեւցնել, որ ռամիկը իշխանական գիւղացին է:

Արիստոտէլին վերագրուած, բայց ապահովապէս նրան չպատկանող Տնտեսութիւն գրուածքում յիշւում են մի քանի տնտեսութիւններ, ի միջի այլոց սատրապականը. սրա եկամուտների մէջ կարեւոր է համարւում հողային հարկ ekphorios եւ dekate: Գիտնականները կարծում են, որ մէկ արքայական հողերի հասն է միւսը պետական: Թերեւս, աւելի ճշմարիտ կը լինէր ասել որ երկու տեսակ հարկը երկու կարգի գիւղերից է, սատրապական եւ պետական: Նոյնը ասելու է եւ հայ սատրապների՝ նախարարների նկատմամբ: Հայ հեղինակները վկայում են որ նախարարները եւ ազատները ունէին գիւղեր եւ ազարակներ: Թէ Արշակունի եւ թէ Սասանեան թագաւորները վարձատրել կամենալով իշխաններին պարգեւում էին «գիւղեան եւ ազարաց»:

Ազարաց ասելով պէտք է հասկանալ այն հողերը, որ մշակում էին իշխաններն իրենք անձամբ թէ ծառաների միջոցով եւ որ կազմում էին նրանց անձնական տնտեսութիւնը:

Փաւստոսի պատմութիւնը Խադի եղների մասին ցոյց է տալիս որ եկեղեցին եւս ունէր սեփական տնտեսութիւն, նմանելով նախարարական տներին: Եկեղեցին շատ կէտերում նախարարացած էր:

Թւում է, որ նախարարների կամ տանուտէրների հետ յաճախ յիշւող ազատները կամ ազատանի, կազմում էին հայ հողային ազնուականութեան աւելի ցած դասը: Ազատ բառը միայն genus proximum չէր նախարարականութեան վերաբերեալ, այլ իրական հասկացողութիւն էր եւ նշանակում էր մանր ազնուականութիւն, նման Իրանի ազատներին:

Հաւանական է, որ նրանք Արշակունիների հետ Հայաստան տեղափոխուած յաղթական Պարթեւ ընտանիքների զաւակներն էին: Պարսիկ ազատները, կարծում են որ արիական ցեղի մնացորդներն էին: Հայ ընկճուած իրականութիւնը չի կարող այդքան հեռու գնալ եւ բարձրանալ մինչեւ Արմենները: Բառը պարթեւական ծագում ունի եւ կրողներն եւս ամենայն հաւանականութեամբ Պարթեւ տոհմեր էին: Հետագայում սրանք կոչւում են հեծեալ, ինչպէս որ Իրանում ազատները կազմում են Սասանեան շրջանում aswar — ձիաւորների դասը: Ազատանի ապրում էր գիւղերում եւ խաղաղ ժամանակ զբաղուած էր իր տնտեսութեամբ եւ գիւղերով: Պարսիկ դեհկան ազնուականը դառնում է գիւղի քետխուդա եւ ի վերջոյ ձուլւում գիւղացիութեան հետ: Հայ ազատանին եւս նման բախտ է ունեցել:

Պատահական չէ եւ ոչ էլ գրական ճամբով է, որ հին տանուտէրը եկել դարձել է հոմանիշ գիւղական քետխուդայի: Հասարակական վայրէջք է: Փաւստոսին ծանօթ Կարնազատները հաւանական կարապետներ էին վայրէջի վրայ կանգնած ազատների:

Արեւելեան պահպանող ոգին հիմ է տալիս համեմատելու նրանց նոր ժամանակների մանր մելիքների եւ բէկերի հետ, որոնցից շատերը գիւղական քետխուդաներ էին եւ ուրիշները ոչնչով չէին զանազանւում գիւղացիներից, միայն ազատ էին հարկերից: Խոշոր նախարարական տները, նրանք որ «դաւառատեարք» էին եւ «կուսակալք, կողմնակալք», եւ կազմում էին փոքր իշխանական մարմիններ, գուցէ եւ առանձին տնտեսութիւն չունէին: Հինգ յայտնի ինքնավար իշխանութիւնները, որոնց անկախութիւնը ճանաչուած էր պարսից եւ բիւզանդիայի կողմից, կարող էին տիպար համարուել հայ մեծամեծ նախարարութեանց, ոչ միայն բդեշխների, այլ եւ Բագրատունի, Արծրունի եւ Մամիկոնեան տների:

Սակայն, երբ զարգանում է սեպհական իրաւունքը եւ նրա զօրութեամբ մեծ տները քայքայւում են եւ վեր ածւում մանր սեպհական կենտրոնների, պէտք է ենթադրել, որ սրանք ոչ միայն տէր էին գիւղերի, այլ եւ ունէին ազարակներ իրենց անմիջական խնամածութեան տակ:

Նախարարական կամ կալուածատիրական հողատիրութեան իրական բնոյթը իր մանրամասնութեան մէջ յայտնի չէ: Կան տեսակ